ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԲՄԾՁԲ-7/2-6

ք. Երևան 07.03.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «ԷԴԵԼ» ՍՊԸ-ն՝ (համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագիր «ՍԱՍՆԱՌ» ՍՊԸ հետ), ի դեմս ընկերության տնօրեն Հ. Հովհաննիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 **Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4 Մատակարարվող տարածաշրջաններից ՀՀ ԶՈՒ ԹՎ անասնաբուժական և ՌԲՎ հիգիենիկ և համաճարակային անվտանգության ծառայությունների կողմից, յուրաքանչյուրը ոչ պակաս ամիսը 4 անգամ կատարի նմուշառում և տրվի որակի և տեխնիկական բնութագրում նշված ցուցանիշների վերաբերյալ եզրակացություն:

Հացի որակական ցուցանիշները ստուգելու նպատակով, հացի նմուշառումը կարող է իրականացվել զորամասից, հաց տեղափոխող մեքենայից, ինչպես նաև հացաթխման ծառայություն մատուցող կազմակերպությունից:Առաջին պահանջի դեպքում հացաթխման ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է ապահովի իր ներկայացուցչի ներկայությունը, չներկայանալու դեպքում նմուշառումը իրականացվելու է առանց ներկայացուցչի՝ մնացած մասնակիցների ներկայությամբ:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Յուրաքանչյուր տարածաշրջանի մասով գործառույթին պետք է ներկայացնի հաց-հացաբուլկեղեն տեղափոխող փոխադրամիջոցի սանիտարական անձնագրի պատճենը, համաձայն ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 14.03.2017թ. թիվ 85 հրամանով հաստատված կարգի:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 162 546 087 (մեկ հարյուր վաթսուներկու միլիոն հինգ հարյուր քառասունվեց հազար ութսունյոթ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրով սահմանված ծառայության մատուցումը նախատեսվում է իրականացնել 2018-2020թթ., համաձայնագրերի կնքման միջոցով:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ

և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Քանի որ պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով «ՍԱՄՆԱՌ» ՍՊԸ հետ, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.15 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ԷԴԵԼ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ ք. Երևան, Շիրակի 45/2
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1930066865990100
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 00406064
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	Տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված N 1
ՀԲՄԾՁԲ-7/2-6 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հացաթխման ծառայություն իրականացնելու համար տրամադրվելիք ալյուրի տեխնիկական բնութագիրը

Հ/հ	Ապրանքատեսակի (աշխատանքի, ծառայության անվանումը)	Տեխնիկական բնութագիր
1	Ալյուր ցորենի 1-ին տեսակի	ՀՍՏ 280-2007, ցորենի ալյուրին բնորոշ, առանց կողմնակի համի և հոտի: Առանց թթվության և դառնության, առանց փտահոտի ու բորբոսի: Խոնավության զանգվածային մասը՝ ոչ ավելի 14.5 %-ից, 50կգ-ոց պոլիէթիլենային պարկերով: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:

Ծանոթություն՝

1* Յուրաքանչյուր ալյուրի պարկերի վրա ներկով, 50-ից 60մմ բարձրությամբ տառերով մակնանշված լինի՝
1. Արտադրող ձեռնարկության անվանումը
2. Արտադրանքի անվանումը, տեսակը
3. Ապրանքի քաշը՝ բրուտտո, նետտո
4. Պահպանման ժամկետը և պայմանները
5. Արտադրության տարին, ամիսը, օրը (ամիսը և օրը մատակարարի կողմից դաջվում է թանաքով)
6. <<Զինվորի բաժին: Վաճառքի ենթակա չէ>> գրառումը

2* Գնորդի կողմից որոշված ստացողին պետք է հանձնել 50 օրից ոչ պակաս վաղեմության արտադրած ալյուր ցորենի 1-ին տեսակի՝ սույն պայմանագրի տեխնիկական բնութագրի համապատասխան:

3* Ալյուրի տեղափոխումը մինչև ապրանքագրում նշված հացաթխման կազմակերպություն, իրականացվելու է ալյուր մատակարարող կազմակերպության կողմից:

4* Հացաթխման կազմակերպություններին ալյուրի հատկացումը իրականացվելու է համաձայն ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության կողմից տրված ապրանքագրերով:

5* Մատակարարը պարտավոր է ալյուրը հացաթխման ծառայություն մատուցող կազմակերպություններին հատկացնել համաձայն ՀՀ ԶՈՒ ԹՎ պարենային ծառայության կողմից տրված ապրանքագրերում նշված քանակների և ժամկետների:

6* Ապրանքագրում նշված ժամկետը խախտելու յուրաքանչյուր դեպք դիտել որպես ուշացում և պայմանագրի շրջանակներում կիրառել համապատասխան տույժեր:

7* Յուրաքանչյուր ամսվա մինչև 5-ը ալյուր մատակարարող կազմակերպությունը, հատկացված ալյուրի վերաբերյալ պետք է հաշվետվություն ներկայացնի ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայություն:

8* Ալյուր մատակարարող կազմակերպությունը յուրաքանչյուր խմբաքանակի համար, ստացողին ալյուրի հանձնման ժամանակ պետք է տրամադրի իր կողմից ստուգված ալյուրի որակական ցուցանիշների վերաբերյալ լաբորատոր հետազոտության փաստաթուղթ:

Հացաթխման ծառայության արդյունքի /կաղապարային հացի/ տեխնիկական բնութագիրը

Հ/հ	Անվանումը	Տեխնիկական բնութագիր
1	Հաց կաղապարային	Հաց կաղապարային, 1-ին տեսակի ցորենի ալյուրից, ՀՍՏ 31-99: Խոնավությունը 42-44%, թթվայնության աստիճանը՝ 2,5-3,5, քաշը՝ միջինը 700 գր +/- 3% թույլատրելի շեղումով, ծակոտելիությունը՝ ոչ պակաս 65%-ից: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:

Ծանոթություն՝

Հացի առաքումը զորամասեր իրականացվում է զորամասերի կողմից նախորդ օրը տրված հայտերի հիման վրա՝ համապատասխան քանակի:

Պատրաստի հացի տեղափոխումը զորամասեր պետք է իրականացվի մատակարարի միջոցով՝ հացի համար նախատեսված մեքենայով, հացի տեփուրների վրա հացը մեկ շարքով շարանելով՝ ամեն օր, մինչև ժամը 11.00-ն: Ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը հացի առաքումը հացաթխումից հետո իրականացնել 6 ժամից ոչ շուտ, իսկ նոյեմբերի 1-ից մինչև մարտի 31-ը՝ 4 ժամից ոչ շուտ:

Տարվա ընթացքում զորամասի մշտական տեղակայման վայրից բացի, զորամասի անձնակազմը զորավարժարանում գտնվելու ժամանակ, հացաթխում իրականացնող կազմակերպությունը կաղապարային հացի մատակարարումը պետք է իրականացնի զորավարժարան, մինչև 150 կմ հեռավորությամբ:

Յուրաքանչյուր ամսվա մինչև 5-ը, հացաթխում իրականացնող կազմակերպությունը, մնացորդի, թխված հացի, ստացված և ծախսված ալյուրի հաշվետվությունը, ինչպես նաև մատակարարված հացի վերաբերյալ զորամասի և կազմակերպության միջև, ըստ օրերի կազմված երկկողմանի փոխադարձ ակտը պետք է ներկայացնի ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայություն:

1 կգ հացի թխման համար պաշտպանության նախարարության կողմից տրամադրվում է 0,757 կգ ալյուր ցորենի 1-ին տեսակի՝ 14,5% խոնավության նորմանների համաձայն:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Հացաթխման ծառայության մատուցումը ըստ տարածաշրջանների	Չ/մ	Քանակը	Միավորի գինը ՀՀ դրամ	Գումարը ՀՀ դրամ	Ծառայության մատուցման ժամկետ
1	**Իջևանի տարածաշրջան, այդ թվում**	**կգ**	**484,866**	**96**	**46547136**	Ծառայության մատուցումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում
1	Իջևան - 51191 զորամաս	կգ	338,355	96	32482080	
2	Իջևան (Սև քար) - 51191 զորամաս	կգ	139,941	96	13434336	
3	Իջևան (Կրիվոյ) - 51191 զորամաս	կգ	6,570	96	630720	
2	**Կոտայքի տարածաշրջան, այդ թվում**	**կգ**	**729,270**	**55.8**	**40693266**	
1	Լուսակերտ - 55261 զորամաս	կգ	367,920	55.8	20529936	
2	Բալահովիտ - 55076 զորամաս	կգ	216,810	55.8	12097998	
3	Ջորաղբյուր - 43755 զորամաս	կգ	118,260	55.8	6598908	
4	Արզնի - 56265 զորամաս	կգ	26,280	55.8	1466424	
3	**Երևանի տարածաշրջան, այդ թվում**	**կգ**	**936,225**	**45**	**42130125**	
1	Երևան - 32822 զորամաս	կգ	98,550	45	4434750	
2	Երևան - 59559 զորամաս	կգ	164,250	45	7391250	
3	Երևան - 55537 զորամաս	կգ	39,420	45	1773900	
4	Երևան - 10724 զորամաս	կգ	55,845	45	2513025	
5	Երևան - 95532 զորամաս	կգ	45,990	45	2069550	
6	Երևան - 14203 զորամաս	կգ	321,930	45	14486850	
7	Նուբարաշեն - 55565 (28920, 54574, 68617, 47379, 38451) զորամաս	կգ	210,240	45	9460800	
4	**Շիրակի տարածաշրջան, այդ թվում**	**կգ**	**276,463**	**120**	**33175560**	
1	Գյումրի - 56952 զորամաս	կգ	52,560	120	6307200	
2	Գյումրի - 40359 զորամաս	կգ	13,140	120	1576800	
3	Արթիկ - 70839 զորամաս	կգ	16,425	120	1971000	
4	Գյումրի - 53661 զորամաս	կգ	88,695	120	10643400	
5	Գյումրի - 55035 զորամաս	կգ	85,933	120	10311960	
6	Գյումրի (Աղին) - 25149 զորամաս	կգ	6,570	120	788400	
7	Գուսանագյուղ - 69334 զորամաս	կգ	13,140	120	1576800	
Ընդամենը՝ 162 546 087 (մեկ հարյուր վաթսուներկու միլիոն հինգ հարյուր քառասունվեց հազար ութսունյոթ) ՀՀ դրամ						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գանձարանական վարչություն
Հ/Հ 900011744079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ ՊՆ ՆՏԼ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ԷԴԵԼ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Շիրակի 45/2
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300668659900100
ՀՎՀՀ 00406064
Տնօրեն

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված N 2
ՀԲՄԾՁԲ-7/2-6 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Հացաթխման ծառայության մատուցումը ըստ տարածաշրջանների	Չ/մ	Քանակը	Միավորի գինը ՀՀ դրամ	Գումարը ՀՀ դրամ	
1	**Իջևանի տարածաշրջան, այդ թվում**	**կգ**	**484,866**	**96**	**46547136**	Պայմանագրի կատարման համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ կնքվելիք Համաձայնագրերով սահմանված վճարման ժամանակացույցով
1	Իջևան - 51191 զորամաս	կգ	338,355	96	32482080	
2	Իջևան (Սև քար) - 51191 զորամաս	կգ	139,941	96	13434336	
3	Իջևան (Կրիվոյ) - 51191 զորամաս	կգ	6,570	96	630720	
2	**Կոտայքի տարածաշրջան, այդ թվում**	**կգ**	**729,270**	**55.8**	**40693266**	
1	Լուսակերտ - 55261 զորամաս	կգ	367,920	55.8	20529936	
2	Բալահովիտ - 55076 զորամաս	կգ	216,810	55.8	12097998	
3	Ջորաղբյուր - 43755 զորամաս	կգ	118,260	55.8	6598908	
4	Արզնի - 56265 զորամաս	կգ	26,280	55.8	1466424	
3	**Երևանի տարածաշրջան, այդ թվում**	**կգ**	**936,225**	**45**	**42130125**	
1	Երևան - 32822 զորամաս	կգ	98,550	45	4434750	
2	Երևան - 59559 զորամաս	կգ	164,250	45	7391250	
3	Երևան - 55537 զորամաս	կգ	39,420	45	1773900	
4	Երևան - 10724 զորամաս	կգ	55,845	45	2513025	
5	Երևան - 95532 զորամաս	կգ	45,990	45	2069550	
6	Երևան - 14203 զորամաս	կգ	321,930	45	14486850	
7	Նուբարաշեն - 55565 (28920, 54574, 68617, 47379, 38451) զորամաս	կգ	210,240	45	9460800	
4	**Շիրակի տարածաշրջան, այդ թվում**	**կգ**	**276,463**	**120**	**33175560**	
1	Գյումրի - 56952 զորամաս	կգ	52,560	120	6307200	
2	Գյումրի - 40359 զորամաս	կգ	13,140	120	1576800	
3	Արթիկ - 70839 զորամաս	կգ	16,425	120	1971000	
4	Գյումրի - 53661 զորամաս	կգ	88,695	120	10643400	
5	Գյումրի - 55035 զորամաս	կգ	85,933	120	10311960	
6	Գյումրի (Աղին) - 25149 զորամաս	կգ	6,570	120	788400	
7	Գուսանագյուղ - 69334 զորամաս	կգ	13,140	120	1576800	

CPV դասակարգումը՝ 98391170/305/15/1

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ՝ ՊԺԿ

Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ԷԴԵԼ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Շիրակի 45/2
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930066865990100
ՀՎՀՀ 00406064
Տնօրեն

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված 3
ՀԲՄԾՁԲ-7/2-6 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
ՀԲՄԾՁԲ-7/2-6 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ՀԲՄԾՁԲ-7/2-6 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 11 -ը ապրիլի 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «ԷԴԵԼ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Հ. Հովհաննիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 07.03.2018թ. կնքված № ՀԲՄԾՁԲ-7/2-6 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.14 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով կողմերը որոշեցին Իջևանի, Երևանի և Շիրակի տարածաշրջանների հացաթխման ծառայության մատուցման միավորի գները նվազեցնել և սահմանել համապատասխանաբար՝ 88 ՀՀ դրամ, 40 ՀՀ դրամ և 109.8 ՀՀ դրամ:

1.2 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված հացաթխման ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **44 319 301.2 (քառասունչորս միլիոն երեք հարյուր տասնինը հազար երեք հարյուր մեկ ամբողջ քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,** որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ, քան 25.12.2018թ (Հավելված N 2):

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 3 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1,2 Հավելվածները բաղկացած են 2 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ԷԴԵԼ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ ք. Երևան, Շիրակի 45/2
ՀՀ ՖՆ աշխատակազմի գանձարանային վարչություն	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1930066865990100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00406064
ՀՀ պաշտպանության նախարարության	
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	Տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«ԷԴԵԼ» ՍՊԸ
"EDEL"
00406064

Հավելված N 1
№ ՀԲՄԾՁԲ-7/2-6 գնման պայմանագրի N1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Հացաթխման ծառայության մատուցումը ըստ տարածաշրջանների	Չ/մ	Քանակը	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/	Ծառայությունների մատուցումը ըստ եռամսյակների 2018թ.		
						2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	**Իջևանի տարածաշրջան, այդ թվում**	**կգ**	**146730**	**88**	**12912240**	**48910**	**48910**	**48910**
1	Իջևան - 51191 զորամաս	կգ	97893	88	8614584	32630	32630	32633
2	Իջևան (Սև քար) - 51191 զորամաս	կգ	46647	88	4104936	15550	15550	15547
3	Իջևան (Կրիվոյ) - 51191 զորամաս	կգ	2190	88	192720	730	730	730
2	**Կոտայքի տարածաշրջան, այդ թվում**	**կգ**	**211335**	**55.8**	**11792493**	**70430**	**70430**	**70475**
1	Լուսակերտ - 55261 զորամաս	կգ	120450	55.8	6721110	40150	40150	40150
2	Բալահովիտ - 55076 զորամաս	կգ	48180	55.8	2688444	16050	16050	16080
3	Ջորաղբյուր - 43755 զորամաս	կգ	31755	55.8	1771929	10580	10580	10595
4	Արզնի - 56265 զորամաս	կգ	10950	55.8	611010	3650	3650	3650
3	**Երևանի տարածաշրջան, այդ թվում**	**կգ**	**270465**	**40**	**10818600**	**90090**	**90090**	**90285**
1	Երևան - 32822 զորամաս	կգ	37230	40	1489200	12400	12400	12430
2	Երևան - 59559 զորամաս	կգ	50370	40	2014800	16750	16750	16870
3	Երևան - 10724 զորամաս	կգ	5475	40	219000	1820	1820	1835
4	Երևան - 95532 զորամաս	կգ	15330	40	613200	5100	5100	5130
5	Երևան - 14203 զորամաս	կգ	98550	40	3942000	32850	32850	32850
6	Նուբարաշեն - 55565 (28920, 54574, 68617, 47379, 38451) զորամաս	կգ	63510	40	2540400	21170	21170	21170
4	**Շիրակի տարածաշրջան, այդ թվում**	**կգ**	**80109**	**109.8**	**8795968.2**	**26655**	**26655**	**26799**
1	Գյումրի - 56952 զորամաս	կգ	13140	109.8	1442772	4380	4380	4380
2	Գյումրի - 40359 զորամաս	կգ	4380	109.8	480924	1460	1460	1460
3	Արթիկ - 70839 զորամաս	կգ	5475	109.8	601155	1825	1825	1825
4	Գյումրի - 53661 զորամաս	կգ	28470	109.8	3126006	9450	9450	9570
5	Գյումրի - 55035 զորամաս	կգ	22074	109.8	2423725.2	7350	7350	7374
6	Գյումրի (Աղին) - 25149 զորամաս	կգ	2190	109.8	240462	730	730	730
7	Գուսանագյուղ - 69334 զորամաս	կգ	4380	109.8	480924	1460	1460	1460
	Ընդամենը	44 319 301.2 (քառասունչորս միլիոն երեք հարյուր տասնինը հազար երեք հարյուր մեկ ամբողջ քսան) ՀՀ դրամ						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի տեղակալ

Կ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ԷԴԵԼ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Շիրակի 45/2
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300668659900100
ՀՎՀՀ 00406064

Տնօրեն

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված N 2
№ ՀԲՄՇՁԲ-7/2-6 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Հացաթխման ծառայության մատուցումը ըստ տարածաշրջանների	*Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 25.12.2018թ.								
		ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	**Իջևանի տարածաշրջան, այդ թվում**	**4304080**	**4304080**	**4304080**	**8608160**	**8608160**	**8608160**	**12912240**	**12912240**	**12912240**
1	Իջևան - 51191 զորամաս	2871440	2871440	2871440	5742880	5742880	5742880	8614584	8614584	8614584
2	Իջևան (Սև քար) - 51191 զորամաս	1368400	1368400	1368400	2736800	2736800	2736800	4104936	4104936	4104936
3	Իջևան (Կրիվոյ) - 51191 զորամաս	64240	64240	64240	128480	128480	128480	192720	192720	192720
2	**Կոտայքի տարածաշրջան, այդ թվում**	**3929994**	**3929994**	**3929994**	**7859988**	**7859988**	**7859988**	**11792493**	**11792493**	**11792493**
1	Լուսակերտ - 55261 զորամաս	2240370	2240370	2240370	4480740	4480740	4480740	6721110	6721110	6721110
2	Բալահովիտ - 55076 զորամաս	895590	895590	895590	1791180	1791180	1791180	2688444	2688444	2688444
3	Ջորաղբյուր - 43755 զորամաս	590364	590364	590364	1180728	1180728	1180728	1771929	1771929	1771929
4	Արզնի - 56265 զորամաս	203670	203670	203670	407340	407340	407340	611010	611010	611010
3	**Երևանի տարածաշրջան, այդ թվում**	**3603600**	**3603600**	**3603600**	**7207200**	**7207200**	**7207200**	**10818600**	**10818600**	**10818600**
1	Երևան - 32822 զորամաս	496000	496000	496000	992000	992000	992000	1489200	1489200	1489200
2	Երևան - 59559 զորամաս	670000	670000	670000	1340000	1340000	1340000	2014800	2014800	2014800
3	Երևան - 10724 զորամաս	72800	72800	72800	145600	145600	145600	219000	219000	219000
4	Երևան - 95532 զորամաս	204000	204000	204000	408000	408000	408000	613200	613200	613200
5	Երևան - 14203 զորամաս	1314000	1314000	1314000	2628000	2628000	2628000	3942000	3942000	3942000
6	Նուբարաշեն - 55565 (28920, 54574, 68617, 47379, 38451) զորամաս	846800	846800	846800	1693600	1693600	1693600	2540400	2540400	2540400
4	**Շիրակի տարածաշրջան, այդ թվում**	**2926719**	**2926719**	**2926719**	**5853438**	**5853438**	**5853438**	**8795968.2**	**8795968.2**	**8795968.2**
1	Գյումրի - 56952 զորամաս	480924	480924	480924	961848	961848	961848	1442772	1442772	1442772
2	Գյումրի - 40359 զորամաս	160308	160308	160308	320616	320616	320616	480924	480924	480924
3	Արթիկ - 70839 զորամաս	200385	200385	200385	400770	400770	400770	601155	601155	601155
4	Գյումրի - 53661 զորամաս	1037610	1037610	1037610	2075220	2075220	2075220	3126006	3126006	3126006
5	Գյումրի - 55035 զորամաս	807030	807030	807030	1614060	1614060	1614060	2423725.2	2423725.2	2423725.2
6	Գյումրի (Աղին) - 25149 զորամաս	80154	80154	80154	160308	160308	160308	240462	240462	240462
7	Գուսանագյուղ - 69334 զորամաս	160308	160308	160308	320616	320616	320616	480924	480924	480924

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:* CPV-ի կոդը՝ 98391170/305/15/1

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺ

Կ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ԷԴԵԼ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Շիրակի 45/2
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930066865990100
ՀՎՀՀ 00406064

Տնօրեն

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ